Հաստատված է

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի

«20» հունվարի 2020 թ. թիվ 141 նիստում

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն

_____ Ա. Սարգսյան

ՀՀ ԳԱԱ

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ
ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույն փաստաթուղթը նկարագրում և սահմանում է ԳԿՄԿ ընդհանուր տեսլականը, նպատակները, խնդիրները և դրանց իրականացմանն ուղղված հիմնական գործողությունները՝ Կենտրոնի գործունեության միջազգայնացման վերաբերյալ, որը բխում է ԳԿՄԿ ռազմավարությունից (այսուհետ՝ ռազմավարություն): 2019-2023 թթ. ԳԿՄԿ միջազգայնացման ռազմավարությունը ենթադրում է Կենտրոնի գործունեության բոլոր բնագավառներում միջազգային ուղղվածության ապահովում, միջազգային համագործակցության խթանում, ուսանողների և դասախոսների համար բազմամշակութային միջավայրի ապահովում:

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնը, իբրև հետազոտական ուսումնական հաստատության նախատիպ, ազգային և տարածաշրջանային դերակատարությամբ գիտակրթական և ուսումնահետազոտական հաստատություն է, որի հիմնական առաքելությունն է խթանել երկրի սոցիալ-տնտեսական զարգացումն ու միջազգային կրթական ու հետազոտական տարածքին ինտեգրումը, ապահովել որակյալ ու մրցունակ կրթություն՝ հետազոտական բաղադրիչի շեշտադրմամբ,

նպաստելով անհատի շարունակական զարգացմանը, հետազոտական կարողությունների ձեռքբերմանը՝ գիտակրթական ոլորտում գիտելիքի ստեղծման, փոխանցման միջոցով՝ իրականացնելով կրթությունից գիտություն սահուն անցումը:
ԳԿՄԿ միջազգայնացման հիմնական և կարևորագույն նպատակն է մագիստրոսների, ասպիրանտների և աշխատակիցների համակողմանի զարգացումը Կենտրոնի ուսումնական, գիտական և մասնագիտական կյանքում, դառնալ գիտակրթական միջազգային բացառիկ կենտրոն՝ ներգրավելով ինչպես հայազգի, այնպես էլ օտարերկրյա պետությունների քաղաքացիների՝ մագիստրոսների, ասպիրանտների, հայցորդների և դասախոսների, շարունակաբար զարգացնել համագործակցային կապերը արտասահմանյան առաջատար բուհերի և գիտակրթական կենտրոնների հետ, իր վարկանիշին և հեղինակությանը համահունչ կայուն և հաստատուն քայլերով ընդլայնել իր միջազգային ճանաչումն ու համբավը:

ԳԿՄԿ-ն, հիմքը ընդունելով իր ռազմավարական ուղղությունները, հետագա հինգ տարիների ընթացքում իր գործունեությունը կուղղի հետևյալ խնդիրների լուծմանը՝

- Արտասահմանյան առաջատար համալսարանների և գիտակրթական կենտրոնների հետ ԳԿՄԿ-ի համագործակցության ընդլայնում, նոր կապերի ստեղծում և զարգացում, համատեղ նախագծերի, փորձի փոխանակման, կրթական ու գիտահետազոտական ծրագրերի նախաձեռնում:
- Միջազգային ծրագրերում ԳԿՄԿ-ի մասնակցության ընդլայնում, եվրոպական գիտակրթական տարածքին Կենտրոնի ինտեգրման ամբողջականացում, Կենտրոնի միջազգայնացում:
- Արտասահմանյան հետազոտական համալսարանների հետ համատեղ կրթական ծրագրերի իրականացման գործընթացի շարունակականության ապահովում:
- Ուսանողական և պրոֆեսորադասախոսական համակազմերի փորձի, գիտելիքների, հմտությունների ու կարողությունների փորձի փոխանակման գործընթացի ընդլայնում:
- Միջազգային ծրագրերի ֆինանսավորման ավելացում, միջազգային ու եվրոպական ֆինանսավորման ներգրավում դրամաշնորհների տեսքով:
- Կենտրոնի բոլոր մասնագիտացումներում դասավանդվող մասնագիտական դասընթացների օտարալեզու դասախոսությունների պրակտիկայի ընդլայնում:

Ռազմավարական նպատակ	Հիմնական գործողություն	Արդյունավետության հիմնական ցուցանիշ/KPI/	Վերջնարդյունք	Ռեսուրսներ
Արտասահմանյան առաջատար համալսարանների և գիտակրթական կենտրոնների հետ ԳԿՄԿ-ի համագործակցության ընդլայնում, նոր կապերի ստեղծում և զարգացում, համատեղ նախագծերի, փորձի փոխանակման, կրթական ու գիտահետազոտական ծրագրերի նախաձեռնում	Ավելացնել արտասահմանյան առաջատար համալսարանների և գիտակրթական կենտրոնների հետ ԳԿՄԿ-ի համագործակցությունըհամա տեղ նախագծերի, փորձի փոխանակման, կրթական ու գիտահետազոտական ծրագրերի նախաձեռնման միջոցով	Կնքվող միջազգային համագործակցության համաձայնագրերի և փոխըմբռնման հուշագրերի թիվ	տարեկան 5 միջազգային համագործակցության համաձայնագրերի և փոխըմբռնման հուշագրերի կնքում	ԳԿՄԿ բոլոր ամբիոններ և բաժիններ, Ամբիոնների միջազգայնացման պատասխանատուներ ուսումնական մաս
	Մշակել միջազգային համագործակցային ծրագրերի արդյունքների վերաբերյալ տեղեկատվության տարածման ճկուն և հանրամատչելի ուղիներ	Վեբկայքի առաջխաղացմանը խթանող լեզուների կիրառման թիվ Վեբկայքի այցելուների թիվ	Վեբկայքի այցելուների թվի աճ՝ տարեկան առնվազն 1%	Արտաքին կապերի բաժին, օտար լեզուների ամբիոն, ՏՏ բաժին, հանրային կապերի բաժին
	Ամփոփել գործունեության արդյունքները յուրաքանչյուր տարվա ավարտին՝ ըստ ԳԿՄԿ միջազգայնացման ռազմավարության խնդիրների և մշակել համապատասխան միջոցառումների ծրագիր լավագույն փորձի տարածման և	Բաժնի հաշվետվություն	ԳԱՑ ցուցանիշներ	Արտաքին կապերի բաժին

	թերությունների շտկման նպատակով			
Արտասահմանյան հետազոտական համալսարանների հետ համատեղ կրթական ծրագրերի իրականացման գործընթացի շարունակականու-թյան ապահովում	Հավաքագրել և ԳԿՄԿ մասնագիտական ամբիոններին տարածել տեղեկատվություն գործող ծրագրերի, գիտական կոնֆերանսների, գիտական հոդվածների հրատարակումների հնարավորությունների վերաբերյալ,	Օտար լեզուներով հրապարակումների թիվ (տեղական և միջազգային ամսագրերում) Elsevier's Scopus database-ի կողմից ինդեքսավորված ակադեմիական ամսագրերում հրապարակված հոդվածների թիվ	տարեկան առվնազն 1% աճ	Արտաքին կապերի բաժին, Ուսումնական մաս, ՈԱ բաժին, գիտ. քարտուղար

	Բարելավել ասպիրանտների և պրոֆեսորադասախոսական կազմի կարողությունները միջազգային հրապարակումներ ունենալու համար	Վերապատրաստումների թիվ Օտար լեզուներով հրապարակումների թիվ	Վերապատրաստ-ված դասախոսների թիվ	Արտաքին կապերի բաժին, Ուսումնական մաս, ՈԱ բաժին, գիտ. քարտուղար օտար լեզուների ամբիոն
	Նախաձեռնել համատեղ հետազոտական նախագծեր տարբեր հետազոտական պատուհանների և հիմնադրամների միջոցով (Jean Monet, Horizon2020 և այլն)	Ընթացիկ համատեղ հետազոտական ծրագրերի թիվ	Հետազոտական ծրագրերի դիվերսիֆիկացում	ԳԿՄԿ ամբիոններ, ամբիոնների միջազգայնացման պատասխանատուներ գիտ. քարտուղար
Ուսանողական և պրոֆեսորադասախոսական համակազմերի փորձի, գիտելիքների, հմտությունների ու կարողությունների փորձի փոխանակման գործընթացի ընդլայնում	Ավելացնել ԳԿՄԿ միջազգային կրեդիտային շարժունակության ծրագրերի թիվը՝ դրանով իսկ նպաստելով ԳԿՄԿ ուսանողական, պրոֆեսորադասախոսական վարչական համակազմերի շարժունակությանը	Փորձի փոխանակման համար արտասահման ուղարկվող և արտասահմանից ժամանող ուսանողական, պրոֆեսորադասախոսական վարչական համակազմերի թիվ	տարեկան 3 միջազգային կրեդիտային շարժունակության ծրագիր	Արտաքին կապերի բաժին, ԳԿՄԿ ամբիոններ, Ամբիոնների միջազգայնացման պատասխանատուներ
	Մշակել միջազգային կրեդիտային շարժունությանն վերաբերող համապատասխան փաստաթղթեր և ընթացակարգեր	Մշակված փաստաթղթերի թիվ		Արտաքին կապերի բաժին, ԳԿՄԿ ամբիոններ, Ամբիոնների միջազգայնացման պատասխանատուներ

	Կազմակերպել տեղեկատվական սեմինարներ՝ ԳԿՄԿ ուսանողներին միջազգայնացման խնդիրների, գործող փոխանակման ծրագրերի վերաբերյալ լուսաբանելու նպատակով	Կազմակերպված իրադարձությունների թիվ		Արտաքին կապերի բաժին, ԳԿՄԿ ամբիոններ, Ամբիոնների միջազգայնացման պատասխանատուներ Հանրային կապերի բաժին
Կենտրոնի բոլոր մասնագիտացումներում դասավանդվող մասնագիտական դասընթացների օտարալեզու դասախոսությունների պրակտիկայի ընդլայնում	Ներդնել օտար լեզուներով դասավանդվող ծրագրեր և առանձին դասընթացներ՝ շեշտադրում կատարելով անգլերենի վրա	Օտար լեզուներով դասընթացներին մասնակցող ուսանողների թիվ, Օտար լեզուներով դասավանդվող դասընթացների թիվ Կրկնակի/համատեղ կրթական ծրագրերի թիվ	Օտար լեզուներով դասընթացների տարեկան առնվազն 1% աճ	Արտաքին կապերի բաժին, ԳԿՄԿ ամբիոններ, Ամբիոնների միջազգայնացման պատասխանատուներ Օտար լեզուների ամբիոն